Հայաստանի Հանրապետությունը ստացել է վարկ Համաշխարհային Բանկի կողմից Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ (ՀՍՆՀ) III լրացուցիչ ֆինանսավորման Ծրագրի ֆինանսավորման նպատակով և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ **Մունիցիպալ ֆինանսական կառավարման ուսուցման** վավերացված վճարումները կատարելու համար:

Առաջադրանքի համառոտ բնութագրությունը. ՀՍՆՀ-ի III լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում Հայաստանի ՝ Գեղարքունիքի, Արագածոտնի, Լոռիի, Շիրակի և Տավուշի մարզերի համայնքներում, որտեղ ՀՍՆՀ-ն իրականացրել է ենթակառուցվածքների վերականգնման ծրագրեր, նախատեվում է իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների ուսուցում: **Պատվիրատուն՝** ՀՍՆՀ-ը, իրավասու և որակավորված հայտատուներին տրամադրում է Պարտավորությունների Տեղեկագիր:

Հայտատուների առաջարկները պետք է ընդգրկեն՝ **հետաքրքրվածության նամակ, կազմակերպության կանոնադրությունը և գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը և ինքնակենսագրական տվյալները (CV-ները), կազմակերության փորձառությունը ապացուցող նախկինում կատարված աշխատանքների ցանկը:**

Խորհրդատու կազմակերպության ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցում (*Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers* (January, 2011) սահմանված խորհրդատուների ընտրության ընթացակարգով:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՍՆՀ գրասենյակից՝ Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ց մինչև ժ.17:00-ն:

Խնդրում ենք, Ձեզ վերոհիշյալ որակավորման տվյալները և հետաքրքրվածության նամակը ներկայացնել նշված հասցեյով ոչ ուշ քան **2014 թ. մայիսի 5-ը, ժամը 17:00**: